Doi: 10.56737/2953-7843-2025.04-129

ԾԱՆՐԱԿՇԻՌ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ[1]

2024 թվականի վերջին ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատարակչությունը լույս է ընծայել բանասիրական գիտությունների դոկտոր Եւա Մնացականյանի «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաֆիկական մտքի գնահատմամբ» ստվարածավալ ուսումնասիրությունը (464 էջ +16 էջ ներդիր):

Գրքի խմբագիրն ու առաջաբանի հեղինակը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանն է, գրախոսները՝ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը եւ բ. գ. դ., պրոֆեսոր Լաուրա Մուրադյանը:

Թումանյանի գրական-ստեղծաբանական ժառանգության վերաբերյալ գիտական գրականության սահմանները հայ քննադատական մտքի պատմության մեջ գրեթե անընդգրկելի են, սակայն նկատի ունենալով մինչ օրս խորքային քննության չենթարկված կամ շրջանցված որոշ էջեր, դրվագներ, իրողություններ՝ վաղուց անհրաժեշտություն կար գիտական սկզբունքների ու չափանիշների ճշգրտման սկզբունքով ձեւավորված Թումանյանագիտության ամբողջական պատմության:

Միանգամայն օրինաչափ է բացառիկ հետաքրքրությունը, որ քննադատությունը անցյալ 130 տարվա ընթացքում ի հայտ է բերել Թումանյանի անհատականության, նրա ստեղծագործական որոնումների, առանձին ստեղծագործությունների, նաեւ ազգային- հասարակական ու մշակութային գործունեության վերաբերյալ: Այս իմաստով նախընթ-

---

[1]* *Ստացվել է՝ 5.05.2025, գրախոսվել է՝ 9.05.2025: էլ. հասցե՝* siranush.margaryan.71@mail.ru:

թաց տարիներին կազմավորվել է մի ամբողջական ու կանոնակարգված գիտակարգ, որով զբաղվել ու շարունակում են զբաղվել գրականության պատմաբանների, տեսաբանների, փիլիսոփաների ու տարբեր գիտաճյուղերի մի քանի սերունդներ։ Ականավոր թումանյանագետների հրաշալի փաղանգում՝ Ա. Տերտերյան, Ա. Ինճիկյան, Էդ. Ջրբաշյան, Հր. Թամրազյան, Ի. Սաֆրազբեկյան, Վլ. Կիրակոսյան, Ա. Եղիազարյան, Ս. Հովհաննիսյան եւ ուրիշներ, իր անուրանալի վաստակն ունի բանասիրական գիտությունների դոկտոր, ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թումանյանագիտության խմբի ղեկավար Եւա Մնացականյանը։

Երկար տարիներ երիտասարդ գիտնականի հետաքրքրությունների առանցքում հայ մեծանուն բանաստեղծն է, նրան առնչվող ամեն բան՝ սկսած կենսագրական, բանասիրական ամենափոքր հարցի ճշգրտումից մինչեւ արխիվային, երբեմն նույնիսկ մասնագետ ընթերցողին անծանոթ նյութի հավաքագրում ու դասդասում, Թումանյանի «Կյանքի ու ստեղծագործության տարեգրություն» գրքի ու «Երկեր»-ի ակադեմիական հրատարակության հատորների համար անօրինակ տքնանք ու աշխատասիրություն։ Իսկ էականն այստեղ վաղուց ձեւավորված մասնագիտական ձեռագիրն է՝ ամեն նյութ, իրողություն անպայմանորեն ներկայացնել գիտականորեն հիմնավորված ու փաստարկված, այն կազմակերպող հնարավոր բոլոր տարրերի ստույգ, պատշաճ ու բազմաշերտ մեկնաբանությամբ։

Մասնագիտական երկարատեւ որոնումների եւ մանրակրկիտ աշխատանքի արդյունք է նաեւ այս հետազոտությունը, որն իր գիտական խնդրադրությամբ, հետազոտվող նյութի ժամանակային փաստարկված տրոհումով, առկախ մնացած եւ ուսումնասիրության արժանի բազմաթիվ խնդիրների ու հարցադրումների մեկնաբանության հանձնառությամբ հակված է ոչ միայն Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ քննադատական նյութի ամփոփման, այլեւ շուրջ կեսդարյա գրական-գեղարվեստական ընթացքի գիտական ու համակարգային վերլուծության։ Հղում անելով մեծավաստակ գրականագետ Էդ. Ջրբաշյանի մի դիտարկմանը, թե «ավելորդ է ապացուցել, որ խոշորագույն հայ գրողների (Աբովյան, Նալբանդյան, Թումանյան, Իսահակյան եւ այլք) ուսումնասիրության հետագա ծավալումը օրակարգի հարց է դարձնում նաեւ գրականագիտության տվյալ ճյուղի մանրամասն եւ օբյեկտիվ պատմու-

թյան ստեղծումը»[2], Մնացականյանը գրում է. «Կարեւորելով Զրբաշյանի ազնիվ մտահոգությունը՝ մենք ձեռնամուխ ենք եղել ավելի քան երեք տասնամյակի ընթացքում Հովհ. Թումանյանի ստեղծագործությանը ուղեկից գրաքննադատական արձագանքների ամբողջական ուսումնասիրությանը: Հավաքված բազմաբնույթ եւ մեծածավալ նյութը՝ լրագրային առաջնորդողներ, հոդվածներ, գրախոսություններ, մենագրական մեծ ու փոքր ուսումնասիրություններ, բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Թումանյանի բազմաժանր ստեղծագործության մեկնաբանության ու արժեւորման տեսանկյունից, այլեւ 1890—1923 թթ. հայ գրաքննադատական մտքի զարգացման միտումների ու գեղագիտական սկզբունքների բացահայտման առումով»[3]:

Ըստ իր հետազոտության գիտական խնդրի էլ Թումանյանագետն առաջադրել է ուսումնասիրվող ժամանակահատվածի հետեւյալ պարբերացումը՝

1. 1890—1899 թվականներ, 2. 1900—1909 թվականներ, 3. 1910—1919 թվականներ, 4. 1920—1923 թվականներ, որոնք կազմում են ուսումնասիրության բուն նյութը: Գիրքն ունի նաեւ «Ներածություն»՝ հարցի պատմության, ուսումնասիրության նպատակի, խնդիրների, գիտական նորույթի եւ արդիականության, մեթոդաբանության վերաբերյալ հեղինակի դիտարկումներով. համապարփակ ու առանձնապես ստվարածավալ են գրականության եւ անձնանունների ցանկերը:

Քննության առանցքում Հովհաննես Թումանյանի բանաստեղծական առաջին ժողովածուներից սկիզբ առած քննադատության ամենատարբեր հարցադրումներ են՝ տարբեր ստեղծագործությունների ընդհանրական բնութագրումներ, ստեղծագործական հղացման նախադրյալների ու կազմաբանական-գեղագիտական խնդիրների քննություն, բանահյուսական հիմքով բանաստեղծական կտորների ներքին շարժման փոխակերպումների տիպաբանության մեկնաբանություն: Բնականաբար, այստեղ են ժամանակի գրական երեւելիները՝ Մանուկ Աբեղյան, Լեո, Արսեն Տերտերյան, Արշակ Չոպանյան, Հակոբ Քյուֆեճյան-Օշական, Վահան Տերյան, Պողոս Մակինցյան, Հարություն Սուրխաթյան, Եղիշե Չարենց... նաեւ ազգային

---

[2] Է.Դ. Զ Ր Բ Ա Շ Յ Ա Ն, *Զորս գագաթ, Երեւան, 1982, էջ 88:*

[3] Ե. Մ Ն Ա Ց Ա Կ Ա Ն Յ Ա Ն, *Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ..., էջ 10: Այսուհետ գրքից կատարված հղումների կողքին փակագծում կնշվի համապատասխան էջը:*

հանճարի ստեղծագործական ընթացքին ուղեկից այն «փոքրերը», երբեմն ընթերցողին անհայտ անուններ, որոնց հետազոտողն անդրադարձել է առանց մասնավոր-էթիկական օղակներ զեղչելու՝ գիտական պատմության ընդհանուր տարածքը ամբողջական ստանալու միտումով։ Եւ Մնացականյանի պաշտամունքի առարկան է Հովհաննես Թումանյանը՝ իբրեւ գրող, մարդ, ազգային ու հասարակական գործիչ, ու դա երեւում է գրականագետի՝ խնամքով գործածած ամեն բառից, ամեն պարբերությունից, ամբողջ գրքից։ Բայց հետազոտողի համար առաջնային խնդիր է եղել գիտականության, համակարգվածության հիմնարար սկզբունքի պահպանումը, Թումանյանի եւ Թումանյանագիտության մասին գիտության ձեւաբանումը ճշգրիտ մտածված համակարգի ներսում։ Դրանում թերեւս առանցքային է նյութերի դասավորության ժամանակագրական հիմունքը, սակայն միայն ժամանակագրությունը չէր կարող համակարգ ձեւավորել, եթե հետազոտողը չվերլուծեր, չագուցեր գրապատմական ժամանակը բնորոշող ներքին, տեսանելի ու անտեսանելի բազմաթիվ կապեր ու առնչություններ։ Ըստ էության, Մնացականյանը Թումանյանի մասին գիտությանը զուգահեռ փորձել է տալ քննադատական ընթացքի տեսությունը՝ տվյալ դպրոցի կամ ուղղության գեղագիտական ու փիլիսոփայական միջուկը որոշարկող քննախույզ հարցադրումներով։

Աշխատության առաջին գլուխը տրոհված է կարեւորագույն հարցադրումներ արծարծող չորս ենթագլուխների՝ Թումանյանի բանաստեղծական առաջին երկու ժողովածուները, «Լոռեցի Սաքո» պոեմի շուրջ ծավալված քննարկումներն ու Սաքոյի խելագարվածության հոգեբանական հիմնավորվածության տարաբնույթ, երբեմն իրարամերժ տեսակետների քննությունը, գրողի թարգմանական առաջին փորձերն ու եւրոպական, մասնավորապես ռուս գրականության գեղարվեստական փորձի յուրացման պատմությունը։

Գրականագետը ներկայացնում է գրողի կայացման, բանաստեղծական որոնումների ու ստեղծագործական աշխարհի կազմավորման առաջին շրջանը, առանձնացնում Թումանյանագիտության ձեւավորման գեղագիտական ու պատմամշակութային նախադրյալները։

Թումանյանը գրականություն մուտք է գործում 1890 թվականին տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուով։ Մինչ այդ հանրությունը ծանոթ չէր նրա տպագիր որեւէ ստեղծագործության, եթե նկատի չունենանք առաջին տպագիր գործը՝ «Արեւ եւ Լուսին» բալլադը, որ

լույս էր տեսել նույն թվականին «Աղբյուր» հանդեսի թիվ 8—9-ում ժողովածուի տպագրությունից օրեր առաջ։ Անգամ ընտանիքի անդամների համար անակնկալ էր բանաստեղծությունների այս գրքի ծնունդը։ Թերեւս ընկերներից մեկ-երկուսն էին միայն, որ տեղյակ էին երիտասարդ Թումանյանի գրական փորձերին։ Առաջին գրքի տպագրությունից հետո Թումանյանի բանաստեղծություններն սկսում են հաճախակի երեւալ մամուլի, հատկապես «Մուրճի» էջերում՝ ավելի ու ավելի գրավելով գրական հասարակության ուշադրությունը։

«Քննադատությունն աննկատ չի թողնում ժողովածուն,— գրում է Մնացականյանը.— 1890 թ. «Մշակի» հմ. 138-ում տպագրվում է Ազ-Լերի (Խ. Մալումյան) «Ակնարկներ» հոդվածը, որտեղ հեղինակը, հեգնախառն հավակնոտությամբ նկատում է, որ օրեցօր ավելանում են... «սունկի պէս բսնող» բանաստեղծները՝ նշելով նաեւ Թումանյանի անունը [51]։ Կարճ ժամանակում իրար են հաջորդում գրական կյանքում քիչ թե շատ դերակատարություն ունեցող գրագետների տարաբնույթ, երբեմն իրարամերժ գրախոսականներ, հոդվածներ, ակնարկներ, որոնք քիչ առնչություն ունեին գիտական չափանիշի հետ եւ կոչված էին գրական կյանքն ու գրող(ներ)ի հոգին պղտորելու։

Տարիներ անց, անդրադառնալով այդ օրերին, Թումանյանը գրում է. «Մեր մամուլը, որ կարծում էր, թե բանաստեղծությունը Ս. Շահազիզի ու Գամառ-Քաթիպայի հետ լռեց կամ Դուրյանի ու Պեշիկթաշլյանի հետ մեռավ, շատ զարմացավ ու զայրացավ այս ջահելների ձայնից եւ գլխարկը դրեց փայտի ծայրին ու այնպես դուրս եկավ այս նորելուկ խմբի առաջ։ Նա կենսական ոչ մի շարժառիթ չորոնեց, ներքին ոչ մի արժանիք չտեսավ կյանքի, գրականության եւ այս նոր հոսանքի մեջ, ոչ մի կապ չնկատեց, եւ այս երեւույթը բացատրեց փառասիրական տենչով եւ նրանով, թե հեշտ է ոտանավոր թխել, հանգերի տակ մթագնել, ծածկել ամեն մի հիմարություն ու... դառնալ բանաստեղծ... Սկսեցին մի անողորմ արշավանք...»[4] [53]։

Լուրջ քննադատությունը, սակայն, ինչպես Մ. Աբեղյանը (Վարսամ) եւ Լ. Մանվելյանը[5], փորձում է, եւ ոչ առանց հաջողության, անաչառու-

---

[4] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Երկերի ժողովածու, հտ. 6, Երեւան, 1959, էջ 107։*

[5] *Թումանյանի առաջին գրքի հրապարակային արձագանքների շարքում բանիմաց դիտարկումներով առանձնանում է Լեւոն Մանվելյանի գրախոսականը՝ տպագրված «Մուրճի» 1891 թ. հունվարյան համարում։ Հոդվածը յուրօրինակ պատասխան էր Խ. Մալումյանի մի-*

թյամբ ցույց տալ երիտասարդ բանաստեղծի առաջին գրքի արժանիքները եւ բացերը։ Նույն թվականի դեկտեմբերի 11-ին եւ 12-ին «Նոր-Դար»-ում տպագրված հոդվածում Աբեղյանն առանցքային հիմնախնդիրների համառոտ մեկնաբանությամբ անդրադառնում է Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուին՝ընդհանուր դիտարկումներից զատ «մասնագիտական լրջությամբ խոսելով բանաստեղծի ժողովրդայնության *մասին՝ թե՛ ձեւի, թե՛ բովանդակության տեսանկյունից, մի հասկացություն, որը... Թումանյանի ստեղծագործության համակարգային ամբողջականությունը պայմանավորող գլխավոր գործոններից է, կապ չունի որեւէ հասարակական-գաղափարական կամ կուսակցական նախասկզբի հետ»[57]։ Առանցքային երկրորդ հարցը, որ քննաբանվում է հոդվածում, Թումանյանի ստեղծագործական խառնվածքի* վիպականությունն *է, գեղարվեստական մտածողության* էպիկականությունը, *որ անշփոթելի ձեռագիր է ձեւավորում հատկապես էպիկական պոեմներում։ «Նրա գրվածքի ամենագեղեցիկ հատվածներն են «Լոռեցի Սաքո», «Մեհրի» եւ «Ալեք», մանավանդ վերջին երկուսը, որոնք մի-մի փոքրիկ քերթվածներ են։ Մեր վիպերգական բանաստեղծության մեջ այդ երեք քերթվածները չունեն իրենց նմանը թե՛ կենդանությամբ, թե՛ զգացմունքների բնականությամբ եւ թե՛ գրավիչ, սահուն եւ, որ գլխավորն է, կանոնավոր գեղեցիկ լեզվով»[6],— գրում է Աբեղյանը, ապա անդրադառնում Թումանյա-*

տումնավոր «ակնարկին»։ Մանվելյանը Թումանյանի «Բանաստեղծությունները» քննում ու արժեւորում է երկու տեսանկյունից։ Իբրեւ գրականության պատմաբան՝ նա նկատում է, որ 1887-ից՝ Հովհաննիսյանի առաջին ժողովածուի տպագրությունից հետո, սկսվել էր արեւելահայ բանաստեղծության նորոգության մի կարեւոր շրջան։ Ուրեմն Թումանյանի ժողովածուն հանկարծահայտ ու անակնկալ երեւույթ չէր, այլ հրապարակ էր եկել իբրեւ արեւելահայ բանաստեղծության նորոգության ներքին խմորումների օրինաչափ արտահայտություն։ Զշրջանցելով բնագրային ինչ-ինչ պակասություններ, որ բացատրվում են երիտասարդ հեղինակի անփորձությամբ՝ գրախոսը կարեւորում եւ առանձնանշում է թումանյանական բնագրի այն «արժանավորությունները», որոնք բնութագրում են հեղինակային ինքնուրույն անհատականություն եւ երաշխավորում զարգացման հեռանկար՝ գեղեցիկ, բանաստեղծական պատկերներ, գեղարվեստական ամբողջություն կազմող հատվածներ, բավական կանոնավոր լեզու, ճիշտ բառընտրություն՝ իր տեղում գործածված, «պարզ, սոսկական ոճ, մասամբ հաջողված տաղաչափություն» եւ այլն [59]։ Մեկ այլ քննադատ՝ Մինաս Բերբերյանը, նկատում է. «Էպոսը — սա է նրա իրական տարերքը։ Մեր կարծիքով՝ նրա նկարագրական բոլոր փոքր երկերը ոչ այլ ինչ են, քան ճեպանկարներ կամ ուրվագծեր նրա մեծ կտավների՝ պոեմների եւ բալլադների համար։ Եւ հարկ է նշել, որ դրանք, ըստ էության, էպիկական պոեզիայի գեղագիտական առաջին քայլերն են հայ գրականության մեջ։ ... Թումանյանցի տաղանդի քնարական կողմը շատ թույլ է զարգացած, դրան հակառակ՝ իբրեւ էպիկական *ոճի բանաստեղծ՝ նա գրեթե եզակի երեւույթ է հայ գրականության մեջ» [65]։*

[6] *Նույն տեղում։*

նի լեզվաոճական առանձնահատկություններին, «Լոռեցի Սաքոն» պոեմին՝ խորամուխ լինելով գեղարվեստական ստեղծագործության փիլիսոփայական համակարգի ներքին բարդությունների մեջ։ Հոդվածի վերջում երիտասարդ բանաստեղծին խորհուրդ է տալիս հեռու մնալ սովորական քարոզներից՝ օրինակ բերելով նրա «Երանություն էր խոստացել հույսս ինձ» բանաստեղծությունը։ «Թող պ. Թումանյանը հեռու պահի իրեն այդ տեսակ գրվածքներից եւ իրեն նվիրի ժողովրդական կյանքին եւ աշխատի այդ կյանքը ներկայացնել իր գրվածքների մեջ իր լավ ու վատ կողմերով, եւ կարծում ենք, որ նա հաջողություն կգտնի»[7]*։*

Աբեղյանի դիտարկումները, ինչպես նկատում է ուսումնասիրության հեղինակը, «բացառիկ նշանակություն պիտի ունենային» հետագա Թումանյանագիտության առանցքային առաջադրույթներում, որովհետեւ նախ վերացարկված չէին իրականությունից, ապա մասնավորի ու ընդհանուրի հարաբերակցության մեջ միանգամայն ակնհայտ էր քննադատի հակումը պատմաքննական ու տիպաբանական տեսություններ ստեղծելու գիտական կերպ[8]*։*

*Ընդհանուր առմամբ՝ հայ գրականության զարգացման օրինաչափությունների տիրույթում է աշխատում նաեւ Եւա Մնացականյանը՝ մի դեպքում Թումանյանի ստեղծագործությունը դիտարկելով իբրեւ վերջավորված, ծածկագրված նշանների (*մասնավորապես գենետիկ հիշողության, ազգային հոգեկերտվածքի, ավանդույթի բարդագույն շղթայի եւ ազգային կյանքի յուրահատուկ հանգամանքների*) փակ համակարգ, մյուս դեպքում դրա գեղարվեստական համարժեքի գնահատությունը կատարելով պատմամշակութաբանական լայն շրջագծում։*

Այս իմաստով գրքում անբավելի հետաքրքրություն է հարուցում հասարակական հոսանքների, քննադատական տարբեր դպրոցների, բարդ, հակասական, երբեմն իրարամերժ տեսակետների ընդհանրա-

---

[7] *Նույն տեղում։*

[8] *Ուշագրավ է, որ «արդեն 1896–1897 թվականներին «Նոր-Դար»-ում տպագրվում է Մ. Աբեղյանի «Գրական դպրոցներ» ստվարածավալ ուսումնասիրությունը, որտեղ գրականության պատմաբան-տեսաբանի բացառիկ հմտությամբ հայագետը ընթերցողին ծանոթացնում է գրական մի քանի հայտնի դպրոցների եւ ուղղությունների» [26], խոսում քննադատական նոր ուղղությունների ու դպրոցների առաջացման մասին, որ, ինչպես հասարակական կյանքում, առավել եւս գրականության մեջ ուղեկցվում էր ավանդույթի ու նորոգության անընդհատ պայքարով՝ առթելով բուռն բանավեճեր, անվերջ հարցադրումներ ու անակնկալներ։*

կան պատկերի քննությունը, որ հետազոտողը մեկնաբանել եւ ներկայացրել է՝ ըստ գիտական ստույգ բնութագրի։ Կարծում եմ, նախեւառաջ սա է հետազոտության մեթոդաբանական ելակետումը, ինչը հետազոտողն իրացրել է՝ առբերելով իր ստեղծած համակարգի նշանագիտական (սեմիոտիկ) դաշտերն ու ըստ կարելվույն մեկնաբանելով եւ վերլուծելով դրանք։

Հայտնի փաստ է, որ ամբողջ ԺԹ. դարում հայ հասարակության ազգային-քաղաքական ու գաղափարական շարժումները ձեւավորվում ու ծրագրվում էին նախեւառաջ գրականության մեջ՝ գրականության գիտակցությունը բովանդակավորելով հայրենիք, ազգություն ու հայրենասիրություն, ազգային մշակույթ ու գաղափարաբանություն, պետություն հասկացություններով, գեղագիտական ու գաղափարական ինքնագիտակցությունը շատ հաճախ իջեցնելով հասարակական գիտակցության վրա։

ԺԹ. դարի վերջին տասնամյակներին գրականությանը զուգահեռ առաջ է մղվում հայ քննադատական միտքը, արգասավոր արդյունքներ ցուցաբերում ոչ միայն դարավերջի գրական ընթացքին ուղղություն տալու, ժամանակի գեղարվեստական փորձն ընդհանրացնելու, այլեւ ազգի քաղաքակրթական հեռանկարի վերաբերյալ հասարակական մտքի բանավեճը ուղղորդելու իմաստով՝ ո՞վ է հայը, որտեղի՞ց է գալիս եւ ո՞ւր է գնում։ «Ժամանակի հայ հասարակական երկու հոսանքներից յուրաքանչյուրը՝ ազգային-պահպանողական եւ ազատական, ազգային-հասարակական նոր առաջընթացի իր ծրագիրն էր առաջադրում՝ օգտագործելով մասսայական տեղեկատվության բոլոր հնարավորություններն ու միջոցները» [20],— գրում է Մնացականյանը։

Մամուլի օրգաններից յուրաքանչյուրը բանավիճական, հրապարակախոսական կրքոտությամբ ուղղություն էր տալիս գրական որոշակի քաղաքականության՝ որոշիչ նշանակություն տալով գրական տարբեր ուղղությունների գաղափարական ու գեղագիտական արժեքայնությանը, առաջադրելով դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրության մեթոդաբանական չափանիշները։

Ներկայացնելով պատմամշակութային կյանքի այս բարդագույն շրջանը՝ Մնացականյանը հղում է կատարում հասարակական մտքի պատմաբաններին՝ քննադատության շարժման հնարավորությունների մեջ հայտնաբերելով ինքնացման ու տիպաբանական յուրահատկությունների ձեւաբանման հստակ նախադրյալներ։ «Ինքնորոշման գրեթե նույն

ճանապարհն է անցնում քննադատությունը, որ փորձում է զատորոշել իր ուսումնասիրության տիրույթը, առարկան, խնդիրները, յուրացնել տեսական գրականագիտության կարեւորագույն դրույթները, արվեստին վերաբերող հարցերը մեկնաբանել տեսական որոշակի հիմնավորմամբ ու փաստարկումներով: Գրականությունը քննադատության առջեւ դնում է նոր պահանջներ, հարկադրում դիմելու նոր եղանակների ու միջոցների: Քննադատությունն աստիճանաբար ձեռք է բերում մեկնաբանության տարաբնույթ բնագրեր, գրական երկերի գեղագիտական ու փիլիսոփայական գնահատման նոր չափանիշներ, գրական դպրոցների, ուղղությունների, հոսանքների բավարար իմացություն, մասնագիտական բառապաշար եւ այլն» [23],— նկատում է Մնացականյանը:

Ակադեմիական իմաստով այս ընթացքը ձեւ էր տալիս գրականության եւ կենսափիլիսոփայական հասկացությունների համապարփակ միասնությանը, որը գեղարվեստական գիտակցությանը ավելի բարդ անցումների ու պատկերացումների հնարավորություն էր ընձեռում:

Հնարավոր չէ զանց առնել մի ուշագրավ նրբերանգ. քննության ողջ ընթացքում գրականագետը որեւէ առիթով չի տարանջատում գրականության եւ գրաքննադատության արեւելահայ ու արեւմտահայ ճյուղերը՝ չնայած հաճախակի է բախվում հայության երկու հատվածներում գոյություն ունեցող աշխարհայացքային, գրականության ընթերցման մեթոդաբանական տարբերություններին, որոնք երբեմն հանգեցնում էին գրական երկի, տարընթերցումների, երբեմն՝ անձնային սուր հակադրությունների ու բախումների: Ավելին, իրավացիորեն նշվում է. «Արեւելահայ եւ արեւմտահայ գրականությունների հակադրության այդ կարծրատիպը, թեեւ սփյուռքի հոգեբանության մեջ դեռ որոշակիորեն պահպանվում է, ժողովրդի միասնական մշակութային գիտակցության մեջ այսօր գրեթե հաղթահարված է» [36], եւ տարանջատման հոգեբանական հանգույցը վաղուց է լուծվել ազգային գրականության գեղարվեստական զարգացման միասնականության գիտակցությամբ:

Գրականության ժամանակի բազմաչափ, համակողմանի քննությունը հետազոտողին հնարավորություն է տալիս երեւույթները դիտարկելու ոչ միայն ըստ պարբերաշրջանների ձեւավորված ներքին համակարգի, այլեւ առավել խոշոր, լայն շրջանակում, որը հին շրջափուլի ավարտի մեջ բանաստեղծական նոր միտումների ու ինքնացման ընթացքն է արձանագրում:

Զարգացման առաջին փուլի տարերայնության ողջ լարվածությունը, անշուշտ, ըստ գրականագետի, իր կնիքն էր թողել այն արձագանքների վրա, որոնք հնչում էին Թումանյանի ժողովածուների, այս կամ այն ստեղծագործության առիթով՝ երբեմն ասպարեզ հանելով պարզունակ, գեղագիտական յուրացումների իմաստով չհղկված, անգամ չափազանց կոշտ գաղափարական մեկնաբանություններ։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե դյուրին ու անխոչընդոտ է եղել Թումանյանի ստեղծագործական ճանապարհը, թե անհանդուրժողականության, չարակամության, ժխտումի չարաշուք ստվերը երբեւէ չի խռովել, չի ցավեցրել բանաստեղծի հոգին։ Ավա՜ղ ու ցավո՜ք։ Թումանյանը երբեք իրեն քննադատողների, իրեն չընդունողների ու չսիրողների պակաս չի ունեցել՝ սկսած բանաստեղծությունների առաջին գրքից, մշակականների նեղահայաց, սեւեռուն արձագանքներից մինչեւ «Լոռեցի Սաքոն», «Սասունցի Դավիթը», «Ախթամարը», «Դեպի Անհունը» եւ բազմաթիվ այլ գործեր։ Դրանց շուրջ ծավալված հակասական, երբեմն անողոք գնահատականներն ու ծանր բանավեճերը հաճախ զերծ չէին բանաստեղծի անձն ու, ասենք, թերի կրթությունը վիրավորելու կամ նրա ստեղծած հերոսների «գյուղական տրեխներն» ու կիսատ, անհամոզիչ հոգեբանությունը ծաղրելու մոլուցքից։ Ավելի բարդ էին ժողովրդական նյութի, բանահյուսական պատառիկների գրական մշակմանը, գրականության լեզվին, բառապաշարին առնչվող հարցերը, երբ սկզբունքային դրույթների կամ հստակ չափանիշների բացակայությունը խոր ճեղքեր էր առաջացնում ոչ միայն գրական բանավեճերում ու Թումանյանի գործերի քննության մեջ, այլ նաեւ մարդկային հարաբերություններում։

Անվիճելի է, որ դրանք եղել են, եւ անկասկած է, թե որքան ճշմարտություններ են մարել քննական տեսությունների ու բանդագուշանքի հանգույցներում, ինչպես, օրինակ, Գ. Բալասանյանի, Ռ. Դրամբյանի, Ս. Համալյանի եւ այլոց հետ կապված բանավեճերում, որոնց չենք անդրադառնա հանրածանոթ լինելու պատճառով։ Բայց Մնացականյանը նկատում է, որ անգամ ամենաուղղագիծ, ճակատային ու մտասեւեռված գնահատումներում կար հոգեբանական անհաղթահարելի մի իրողություն, որ առնչվում էր Թումանյանի անքննելի մեծությանը։ Ավելին, նա նուրբ դիտողականությամբ որսում է սահմանային-ճգնաժամային վիճակների ներքին վեհությունը նաեւ՝ ցուցանելով, որ հայոց մտքի Պառնասում Մեծերը ավելի մեծ էին, քան իրենց ժամանակը։

Ահա այստեղ է Թումանյանի եւ նրա տաղանդավոր ժամանակակիցների ազգային, գրական, հրապարակախոսական, լայն իմաստով՝ պատմամշակութային գործունեության բովանդակային քննությունը, որ ժամանակային առումով տեղավորված է աշխատության երկրորդ եւ երրորդ գլուխներում։

Ուսումնասիրությունը հատկապես այս գլուխներում ունի բազմաչափ, երկխոսական նկարագիր, որը դրսեւորվում է Թումանյանի բանաստեղծության զարգացման օրինաչափությունները ժամանակի գեղարվեստական մտածողության համապատկերում դիտարկելու շնորհիվ։ Բանն այն է, որ Ի. դարի առաջին տասնամյակներին, երբ արդեն կուտակվել էր գիտական համակարգման համար ահռելի փաստանյութ, հայ քննադատական մտքի իմացաբանական ու գործառնական արծարծումներում սկսվում է էականորեն ձեւաբանվել գրական նորահայտ ուղղությունների եւ դպրոցների հարցը։

Ի. դարասկզբին արդեն առանձնահատուկ նկարագրով ու ոճի անհատականությամբ ուրույն հանգրվանի էր հասել Թումանյանի բանաստեղծությունը՝ ամբողջանալով իբրեւ հստակ ճանաչելի, բացարձակ ինքնատիպ համակարգ։ Նրան ճանաչում էին բերել բանաստեղծությունների նախորդ երկու ժողովածուները (1890, 1892), «Դաշնակներ» փոքրիկ գիրքը (լույս է տեսել երկու անգամ՝ 1893, եւ փոփոխված՝ 1896), «Լոռեցի Սաքոյի» վերամշակված տարբերակը (1896), «Աղբյուր» ամսագրի մատենաշարով տպագրված գրքույկը (1899, պարունակում է չորս չափածո եւ մեկ արձակ ստեղծագործություն), Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» (1896) եւ Լերմոնտովի «Մծիրի» (1896) պոեմների թարգմանությունները, պարբերական մամուլում, «Հորիզոն» հանդեսում տպագրված մի շարք գործեր [124]։

«Սակայն իրավացի է Էդ. Ջրբաշյանը՝ նկատելով. «90-ական թվականները նրա գրական կենսագրության մեջ նշանակալից են ոչ այնքան հասարակությանը հանձնված տպագիր երկերով, որքան այդ «թաքուն» նախապատրաստական աշխատանքով, որը պետք է հիմք դառնար ստեղծագործական մեծ թռիչքի համար»[9],— գրում է Մնացականյանը։ 1903 թ. տպագրվում է «Բանաստեղծություններ» երրորդ ժողովածուն, որ գրականասեր հասարակությանը անակնկալի է բերում իր աննախադեպ բովանդակությամբ։

---

[9] Էդ. Ջրբաշյան, *Թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ, Երեւան, 1988, էջ 29։*

Թումանյանագիտությունը վաղուց է բանաստեղծի ստեղծագործական կենսագրության մեջ առանձնացնում 1901—1905-ը՝ համարելով բացառիկ բարձր ու շքեղ ստեղծումների, գեղարվեստական բարձրագույն մտածողության աննախադեպ մի ժամանակ. էական վերամշակման են ենթարկվում մի քանի գործեր, առաջին անգամ տպագրվում են «Պոետն ու Մուսան», «Սասունցի Դավիթը», «Դեպի Անհունը», «Փարվանան», «Թմկաբերդի առումը», մի շարք բանաստեղծություններ։ Դրանց մեծ մասը Թումանյանը ներառում է հենց «Բանաստեղծություններ»-ի երրորդ հատոր։ 1908 թ. Բաքվում տպագրվում է «Բանաստեղծություններ» IV ժողովածուն, որն ամփոփում էր նրա քսանամյա ստեղծագործական ճանապարհի լավագույն էջերը [134]։

Ներքին խորությունների բացահայտման մի շրջան էր սա, որ ամբողջ շքեղությամբ ցուցադրեց բանաստեղծի տաղանդի հնարավորություններն ու ստեղծագործական կարողությունները՝ բարդացնելով քննադատության՝ նրան ճիշտ ընկալելու եւ մեկնաբանելու խնդիրը։ Ծավալվում են գրական ասուլիսներ, բանավեճեր, բացարձակ գնահատանքի, երբեմն՝ հակադարձումի ու դիմադարձության շեշտադրումներով ընդհանրացումներ, որոնցով ողողվում են պարբերական մամուլը, գրականմշակութային կյանքը։

Բայց այս շրջանը բնորոշում է մի բան, որ զարմանալի նախաձեւ է ուրվագծում Թումանյանագիտության պատմության մեջ։ Սկիզբ է առնում մեկնաբանության՝ հստակ ձեւակերպված հայեցակարգային դիտանկյունը, որը, ինչպես հոգեբանության մեջ, բացառում է երրորդ դեմքի ներկայությունը, այսպես կոչված արտաքին հանգամանքների հակադարձությունը՝ գիտական արժանավայել ձեւաչափով մեծերին առավել մեծացնելով ամենայն հայոց բանաստեղծի ստեղծագործության գնահատումներում, Թումանյանի բանաստեղծությունից «ուշացածներին» գնահատելով սոսկ իրենց «ուրույն» գրապատմական ներկայության դրամատիկ հանգամանքներում։ Քննադատությունը վեր է բարձրանում փորձարարական միակողմանիությունից եւ հասարակական երեւույթների գոեհիկ մեկնաբանությունից՝ նախընտրություն տալով Թումանյանի բանաստեղծության էությանն ու գոյաբանական հղումներին վերաբերող տեսական, մշակութաբանական ելակետերին։

Բավական մեծ խորատեսություն եւ դիտողականություն է պահանջվել գրականագետից՝ անջատվելու Թումանյանական այս շրջանը

բնութագրելու բարձրագոչ-ջատագովական գայթակղությունից եւ տարրալուծելու, մեկնաբանելու նրա ստեղծագործության գեղագիտական, փիլիսոփայական բարդությունները, դրա շուրջ ծավալված քննարկումները զուտ գիտական տեսանկյունից: Այդ վերլուծությունները զերծ են զգացմունքային զեղումներից եւ առաջնորդված են բացառապես քննական մոտեցմամբ:

Իրականում Մնացականյանը ներկայացնում է գիտական հզոր ներուժի քննադատների, որոնց գրականագիտական-փիլիսոփայական գնահատությունների մեջ գրեթե անսխալական ճշգրտությամբ բնութագրվում-բնորոշվում է հայ գրականության ժամանակը՝ հրապարակ բերելով նրանց գիտական առաջադրությունը Թումանյանի ստեղծագործության առիթով: «Թե՛ Ա. Տերտերյանը, թե՛ Ն. Աղբալյանը, թե՛ Պ. Մակինցյանն ու Վահան Տերյանը իրենց ակնհայտ համակրանքի ու մեծարման ցույցերը մեկ անգամ չէ, որ դրսեւորել են Թումանյանի նկատմամբ... Նրանք Թումանյանին անդրադարձել են տարբեր առիթներով ու հաճախականությամբ, սակայն նրանց առաջ քաշած հարցերն ու դիտարկումները դարձել են թումանյանագիտության զարգացման յուրօրինակ ուղենիշներ» [234],— նկատում է գրականագետը:

Նյութի գիտական յուրացման եւ տիպաբանական չափորոշիչների ճշգրտման սուր հետեւողականությամբ անդրադառնալով այս շրջափուլի քննադատության հիմնավոր, հնարավորինս անկողմնակալ գնահատումներին՝ Մնացականյանն առանձնացնում է Արսեն Տերտերյանի «Հովհաննես Թումանյան. հայրենի եզերքի քնարերգուն» (1911) աշխատությունը, որն «այսօրվա չափանիշներով էլ թումանյանագիտության կարեւոր էջերից է: Ի տարբերություն նախորդ քննադատների՝ Տերտերյանը դնում է բանաստեղծի ստեղծագործության համակողմանի վերլուծության ու գնահատման գիտական սկզբունքների հիմքը: Շրջանցելով քննադատության ավանդական եղանակները՝ նա առաջադրում է գեղարվեստական երկի վերլուծության ու գնահատման գեղագիտական-հոգեբանական մեթոդը» [287]:

Գրքի քննական դիտումներում ոչ միայն Տերտերյանն է երեւում գեղագետի եւ մտածողի անհատական աշխարհայացքով, տեսական ընդհանրացումներ կատարելու անկրկնելի ոճով, այլեւ Թումանյանի ստեղծագործության ամբողջական համակարգը՝ առանց քննադատության նախկին փորձով միջնորդավորված տարածության, հոգեբանական բազմաշերտ մեկնություններով: Տերտերյանը գտել է թեմատիկ

այն գիծը, որը կազմում է գրողի գեղագիտության ու աշխարհայացքի առանցքը՝ հայրենի եզերքը, եւ իր ցանկացած միտք ու վերլուծություն նա, ի վերջո, հանգեցնում է այդ մտադրությին։ «Ինչպես եզրակացնում է Տերտերյանը, բանաստեղծը հոգեկան խաղաղությունը վերագտնում է լոկ այն ժամանակ, երբ թեւակոխում է հայրենի եզերք։ Իսկ ի՞նչ է «հայրենի եզերքը»՝ հայրենիքը։ Այս հարցի շուրջ բավական տարողունակ ու խորաթափանց դատողություններ է անում քննադատը։ Հայրենի եզերքն այն է, բացատրում է նա, որտեղ բանաստեղծը «սիրով է տոգորված, սիրում է եւ սիրվում։ Նրա հոգին խաղաղ է, որովհետեւ սիրո միջոցով ընդգրկում է յուր սեփական խմբակցությունը, հաղորդակից է դառնում վերջինիս անհունությանն ու հավերժությանը...» [296],— գրում է Թումանյանագետն ու նկատում, թե այդ տիեզերական, աստվածային սիրո չափման տակ է Տերտերյանն այլեւս քննում «Թմկաբերդի առումը». «Սերը չի կարող դավաճանել։ Նա կարող է մոլորվել, սայթաքել, բայց վերջիվերջո հաղթանակը նրան է պատկանում։ Սիրո հենց այդ հաղթանակն է, որ հնարավոր է դարձնում անմահությունը։ Թմկաբերդի տիրուհին մարդուն անմահացնող սիրո այդ հաղթանակի մարմնացումն է»[10], «Ախթամարը»՝ հայրենի եզերքի անաղարտ սիրո մեկ այլ դրսեւորում, «Անուշը»՝ Թումանյանի երկերի գլուխգործոց... Մի՞շտ են արդյոք անսխալական Տերտերյանի դիտումները բանաստեղծի այս կամ այն գործի վերաբերյալ, իհարկե, ո՛չ։ Որովհետեւ «Տերտերյանը սովորաբար քննում է ոչ թե գեղարվեստական երկն իբրեւ ամբողջություն, իր բոլոր բաղադրամասերով, այլ միայն նրա մեջ հանդես եկող մեկ կամ մի քանի բնավորություններ՝ իրենց սոցիալ-հոգեբանական բնավորությամբ»[11]։ Սա ընդգծելով՝ Մնացականյանն ի վերջո հարցի դրվածքը հանգեցնում է ուսումնասիրության մեջ գրական փաստերի ու տեսության համադրության հանրագումարին՝ գրելով. «Հովհ. Թումանյանին նվիրված ուսումնասիրությունը Ա. Տերտերյանն ավարտում է խոսուն ենթավերնագրով՝ «Հայրենի եզերքի լավատեսություն»։ Սկզբունքը չի փոխվում. բանաստեղծի հոգեբանական երկփեղկվածությունը կապվում է հակոտնյա աշխարհների հետ։ Քաղքենական միջավայրը միայն հակակրանք է առաջացնում՝

---

[10] Ա. Տերտերյան, *Երկեր, էջ 86;*

[11] *Հայ նոր գրականության պատմություն, հտ. 5, էջ 180։*

մղելով հոռետեսության, մինչդեռ հայրենի եզերքի հետ կապված ամեն ինչ՝ թե՛ բնաշխարհը, թե՛ մարդիկ, թե՛ նույնիսկ նախապաշարումներն ու կեցությունը, սիրելի են եւ հիմք են տալիս լավատեսության» [299]։

Մեծ աշխարհ ու հոռետեսություն։ Արդյոք միայն հոռետեսությո՞ւն, թե՞ ցավ, անհատական ու ազգային ողբերգությունների մի մղձավանջային շղթա, որն ուղեկցում է Թումանյանին մինչ մահ։ Այս տարիներին Թումանյանի ազգային, հասարակական բանիբուն գործունեությունը, մարդկային բացառիկ նկարագիրն ու ընտանեկան անպատմելի ողբերգությունները Եւա Մնացականանը ներկայացնում է չափի բացառիկ զգացողությամբ, ծանր ու իմաստուն մի լռության մեջ՝ չփորձելով իրողության բուն իմաստը, սրբազան զոհաբերության խորությունը ստուգել ինչ-ինչ վերադիրներով։ Նա Թումանյանի կերպարում պարզապես կարեւորում է երկու բան՝ զոհաբերության պատրաստակամությունն ու անհատական պատասխանատվության խնդիրը, որոնք այլեւս դուրս էին անձնականության սահմաններից եւ տրված էին գրողին՝ սիրո ամենադաժան անողոքությամբ։

Իսկ այն, թե գոյաբանական զուգահեռի վրա անհատական զոհաբերությունն ու ինքնանվիրաբերումն ինչպես է վերադառնում գրական ու ազգային միջավայրի՝ պաշտամունքի հասնող մաքուր, անեղծ, անմեկնելի արձագանքներում, Մնացականյանը պատմում է գրքի երկու ենթագլուխներում՝ «Հովհաննես Թումանյանի հայտնությունը 50-ամյակի հոբելյանական հրապարակումներում» եւ «Հովհաննես Թումանյանը հետմահու հրապարակումներում»։

Քսանական թվականների հասարակական, գրական-մշակութային կյանքի խորքային, բարդ տեղաշարժերի, ավանդույթի եւ նորարարության բախման, արժեքային ու բարոյական ընկալումների համընդհանուր փոփոխության (եթե չասենք՝ քայքայման) ընթացքի մեջ Թումանյանի ստեղծագործության սկզբունքների վերաբերյալ քննադատական դիտումներին է նվիրված ուսումնասիրության չորրորդ գլուխը։ Մարքսիստական քննադատության «մեթոդաբանական վերակառուցման» խնդրի առաջ են կանգնում անգամ Թումանյանի ակնարկած «եւրոպական ճաշակ ու զարգացում ունեցող» քննադատներից շատերը, անգամ Ա. Տերտերյանի ու Մ. Աբեղյանի նման վաստակաշատ քննադատները եւ ոչ միայն, որոնց հայացքներում չէր կարող բեկում չառաջանալ գյուղագրության «հեռուներում» մնացած Թումանյանի

վերաբերյալ։ Հեղափոխական գաղափարների խանդավառությունը ինչ-որ վեհ, մարքսիստական նպատակի բանդագուշանքի մեջ սուզելով ազգային գրականության, մշակույթի հեռանկարը՝ շուտով ոխերիմ թշնամանքով իրար դեմ է հանում երբեմնի գրչակից ընկերներին, իսկ բոլոր «հների» դեմ՝ առավել ուղղափառությամբ աչքի ընկնող հեղափոխական նորելուկներին։

Եւ Մնացականյանը փորձում է գրական ժամանակի բարդագույն վայրիվերումները, ասպարեզ նետված կուսակցականացված գաղափարները, մասնավորապես Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ գնահատականները գիտական վերլուծության ենթարկել՝ նրբանկատորեն գրելով, թե անխուսափելի է որոշ կարծիքների ու տեսակետների վերանայման անհրաժեշտությունը։ Որովհետեւ ինչ արժե քննադատական հայացքը տարերային, ծանր այս ժամանակի նկատմամբ, եթե նրա հակասականության մեջ չճանաչված (կորուսյալ) պիտի մնա բնատուր տաղանդի, ներքին գիտակցության, հոգեկցության այն բացառիկ ներզգայությունը, որով ամեն ինչից անդին հայոց մեծերը «ճանաչել ու գնահատել» են միմյանց։

Այստեղ են Եղիշե Չարենցը, Վահան Տերյանը, Ալ. Մյասնիկյանը, Պ.Մակինցյանը եւ ուրիշներ։ «...Մեզ միշտ թվացել է,— «Երեքի դեկլարացիայի» օրերին գրում է Չարենցը,— որ Հ. Թումանյանի ստեղծագործության ոգին մինչեւ օրս էլ ապրում է հայ բանաստեղծության մեջ,— որ բացի Վ. Տերյանի գրական «դպրոցից»՝ կա մի ուրիշը եւս, որն ա՛յլ է իր բովանդակությամբ եւ ստեղծագործական ձեւերով։ Բայց երբ մի քիչ մոտիկից ենք նայում խնդրին — այդ տրադիցիոն կարծիքը տեղի է տալիս, եւ մենք տեսնում ենք, որ Վ. Տերյանի գրական ուղղության կողքին վերջին տասնամյակի մեր բանաստեղծությունը չի ունեցել ուրիշ որեւէ ուղղություն։ Այստեղ մեզ Հ.Թումանյանը զբաղեցնում է այնչափով, ինչ չափով որ նա առնչություն է ունեցել վերջին տասնամյակի բանաստեղծության հետ — եւ մենք հարկադրված ենք ասել, որ այդ առնչությունը արտահայտվել է միմիայն իրա, Հ. Թումանյանի, ստեղծագործությամբ։ Այն պարզ հանգամանքը, որ Հ. Թումանյանը շարունակում է ստեղծագործել մինչեւ օրս — զգալ է տալիս նրա ներկայությունը մեր բանաստեղծության մեջ, բայց այդ «ներկայությունը» մեր կարծիքով ունի — եւ վերջին տասնամյակում ունեցել է — միմիայն արտաքին, եթե կարելի է այսպես ասել՝ «ֆիզիկական» նշանակություն։ Իր ստեղծագործության

բովանդակությամբ նա վաղուց է հեռացել մեզանից, դարձել անցյալի սեփականություն...»[12]։

Թվում է, թե ավարտուն են բնորոշումները, բացասման իմաստով՝ անառարկելի, սուր ու ծայրահեղ վերադիրները բանաստեղծի վերաբերյալ։

Եւ Մնացականյանը դարձյալ իրերի քննությունը կառուցում է երկխոսության հիմունքով՝ վերծանելով երկխոսությունը հայոց Մեծի Տիեզերական, իմաստավոր լռությամբ. «խորին ներքնատեսությամբ նա զգում էր՝ սկսվում է գեղագիտական մտածողության նոր շրջան, որը նոր պահանջներ է առաջադրելու, ուստի պետք է ճիշտ կողմնորոշվելու զգոնություն ու լրջախոհություն ցուցաբերել անցումային այս փուլում, որպեսզի նորի հաստատման մոլուցքով տարված՝ չոտնահարվեն ազգային մշակույթի իրական արժեքները» [355]։

Եւ ի՜նչ փիլիսփայական հաշտություն էր սա, գրականության վաղվա օրվա ու գրականության մարդկանց ի՜նչ հանճարեղ գիտակցություն։ «Եթե Թումանյանը Չարենցի եւ նրա համախոհների հախուռն արմատականությանը, դրա շուրջ ծավալված զարգացումներին հետեւում էր ներհուն լռությամբ, որոշակի ներողամտությամբ, ապա քննադատությունը՝ ի դեմս Հ. Սուրխաթյանի, Ա. Կարինյանի, Պ. Մակինցյանի, Տ. Հախումյանի եւ այլոց, զգալով դեկլարացիայի վտանգավոր ազդեցության սպառնալիքը գրականության բնականոն զարգացման համար, քննադատական ելույթներով ազդարարում է այդ սպառնալիքի մասին՝ սկիզբ դնելով երկուստեք անողոք, բազմաբովանդակ ու մեծածավալ բանավեճերի» [356],— գրում է քննադատը՝ հաստատապես համոզված, որ առերեւույթ այսքան ուղղագիծ ու մակերեսային չէր կարող ավարտվել այս պատմությունը՝ ստվերում թողնելով մարդկային, հոգեբանական ու գրական բազմաթիվ մանրամասներ... Իսկ այդ մանրամասների մեջ բազմաթիվ բարդ ու հակասական տարուբերումներ կան, ներքին անտեսանելի ու ողբերգական բաբախումներ, որոնք քննադատը փորձում է լուծել հանգամանալից քննությամբ, առանց ավելորդ բազմակետերի։

Գեղեցիկ, երի՜ցս գեղեցիկ ու ցավ պատճառելու չափ հուզիչ են գրքի այս էջերը, որոնց մեջ հեղինակին հաջողվել է ստեղծել, վերացարկել փոփոխվող ժամանակի քննությանը դիմացող մնայուն արժեքների վե-

---

[12] Նույն տեղում, էջ 16։

բաբերյալ մի չքնաղ ու իմաստավոր պատմություն... Իսկ այս շրջանում Հովհաննես Թումանյանը ծանր հիվանդ էր արդեն... Բայց չի ընդհատվում պատմության ընթացքը՝ բոլորանվեր, անմնացորդ, անանձնական պատասխանատվությամբ...

Բանաստեղծը շարունակում էր ազգանպաստ ու գրական գործունեությունը՝ ափսոսանքի, իր շուրջը ստեղծված վիճակի ողբերգականության գիտակցությամբ. «...Ստեղծագործության համար առանձին տրամադրություն է հարկավոր. ֆիզիկական եւ հոգեկան պայմաններ, հանգիստ ջղեր, պայծառ տրամադրություն։ Դժբախտաբար, մեր կյանքի պայմանները շատ են աննպաստ. Վայրիվերումներն անվերջ ու ամեն տեսակի. շատ է դժվար էս պայմաններում ապրելը, ստեղծագործելը»[13]։

Տպագրվում են վերջին գործերը՝ «Քառյակներ» (1920, Թիֆլիս), «Բանաստեղծություններ» (1922, Պոլիս) ժողովածուները, ինքնուրույն ու թարգմանական այլ գործեր՝ «Սիրիուսի հրաժեշտը», «Արուսյակ», «Անբուն Կրկուն», «Աղբյուրները հընչում են ու անց կենում...» եւ այլն՝ կրկին առիթ դառնալով քննադատական բուռն արձագանքների...

1923 թ. մարտի 25-ին «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը գուժում է. «Ամսիս 23-ին, 21 ժամին վախճանվեց Թումանյանը...»[14]։ Բանաստեղծի մահը վերածվում է համաժողովրդական սգահանդեսի։

1923 թ. ապրիլի 3-ին «ԽորհրդայինՀայաստան» թերթում Չարենցը տպագրում է «Երկու աշխարհի սահմանագծում» հոդվածը։ Անցյալի ու ապագայի արանքում տարուբերվող ժամանակը ասես կանգ է առնում, ներկա է դառնում մի վայրկյանում[15]։

«Անցյալի ու ներկայի հարաբերության վերաբերյալ չարենցյան կանխորոշումները ձեւական առումով, իհարկե, մնացել էին նույնը,— գրում է

---

[13] Ն. Թումանյան, *Հուշեր եւ զրույցներ, 1969, էջ 225։*

[14] *«Խորհրդային Հայաստան», հմ. 61, Երեւան, 1923։*

[15] *Սա արդեն Թումանյանի ժամանակն էր, եւ Չարենցը, առկախ թողնելով բազմաթիվ հարցեր, այսպիսի ջերմությամբ ու պաշտամունքով է նրան դեպի Անհունը ճանապարհում. «Նրան չէր կարելի չճանաչել, այդ բարձրահասակ, արծաթագեմ լոռեցուն, որ Դսեղից Թիֆլիս էր ընկել եւ այդ բազմացեղ քաղաքում, արեւելքի եւ արեւմուտքի այդ երփներանգ խառնարանում դարձել էր միջցեղային մերձեցման աշտարակ, այլազան մշակույթների սինթետիկ դեմք։ Գրիգորի Ռոբաքիձեն, Աքպեր Սադրկով, Մուստաֆա Չոկաեւ, Վալերի Բրյուսով— ամեն ժողովրդի ու ցեղի պոետ, ամեն մշակույթի տիպական ներկայացուցիչ նրա շուրջն էին խմբվում, հարազատանում նրան, եւ դեպի իրենց հեռու ու մոտիկ հայրենիքները տանում Հովհ. Թումանյանի՝այդ հմայիչ լոռեցու մասին սիրելի հիշողություններ, հարգանք ու մեծարանք», «ԽորհրդայինՀայաստան», հմ. 77 (ապրիլի 15), 1923։*

Թումանյանագետը՝ մեջբերելով Չարենցին.— «1917 թ. Հոկտեմբերը «հատու սրով» անանցանելի սահման էր գծել երկու աշխարհների միջև. սահմանագծից այս կողմ մնացածների համար այդ անցյալը դարձել է «հեռու ու անհաղորդ, մռայլ տեսիլ, զառանցանք»։ Բայց փոխվել էր շեշտադրությունը։ «Եւ ապա, հինգ փոթորկոտ ու տակնուվրա անող տարիների ընթացքում խորացավ ու անանցանելի վիհ դարձավ այդ գիծը եւ եղան մարդիկ, որոնք մնացին երկու աշխարհները իրարից բաժանող այդ վիհացած սահմանագծում,— բացատրում է Չարենցը, ապա ավելացնում։— Հնից, տարիների մութից, մեր պոեզիայի աղքատիկ էջերով ձգվել էր դեպի նորը եռակազմ մի շղթա, տարիների մուժից — մինչեւ Հոկտեմբերը։ Շղթայի այս ծայրում, ամենամոտը մեզ եւ ամենասիրելին — Տերյանն էր,— այն ծայրում, մեր այսպես կոչված «նորագույն պոեզիայի» ելման կետում — Հով. Թումանյանը։ Մեջտեղում Ավետիք Իսահակյանն էր...»[16]։ Ըստ Չարենցի՝ Տերյանի մահով ավարտվում է հայ բանաստեղծության փուլը, որը կարծես միջնօղակ էր հնի ու նորի։ Հեռանում է նաեւ «ամենամեծը նրանցից, ամենավաստակյալը, հայ նորագույն բանաստեղծության նահապետն ու մեծ վարպետը – Հով. Թումանյանը»[17] [364]։

Արդ, Եւա Մնացականյանը ուսումնասիրության վերջին ենթագլխում հավաքում ու համակարգում է 1923-ին տեղական եւ արտասահմանյան մամուլում, տարաբնույթ հանդեսներում ու ալմանախներում տպագրված գրեթե բոլոր արձագանքները՝ կապված հայոց Մեծի անժամանակ մահվան, նրա կերպարի բացառիկության ու ստեղծագործության նորովի գնահատումների հետ։ Այս բաժինն անչափ հետաքրքիր է ոչ միայն ժամանակակիցների՝ Թումանյանին տրված յուրօրինակ գնահատականների ու վերհուշերի, ամենագեղեցիկ ու առինքնող-հուզական պատմությունների, այլեւ նրա բանաստեղծության հետ կապված որոշակի սկզբունքային հարցերի հստակեցման, հայոց գրականության մեջ Թումանյանի բացառիկ տեղի ճշգրտման իմաստով։ Այստեղ Թումանյանին ժամանակակից գրեթե բոլոր մեծերն են՝ Վարդգես Ահարոնյան, Ալ. Խատիսյան, Ավ. Իսահակյան, Ստ. Զորյան, Եղ. Չարենց եւ ուրիշներ։ Եւա Մնացականյանն այստեղ էլ է մի որոշակի համակարգ ստեղծել՝ հայոց մտքի ու իմացականության այս հրաշալի փաղանգը Թումանյանի մեջ տեսնում էր գրական

---

[16] *«Խորհրդային Հայաստան», հմ. 68 (ապրիլի 3), 1923։*

[17] *Նույն տեղում։*

ու մարդկային բացառիկ մի երեւույթ, որ «երեկ իրենց կողքին էր, բայց արդեն դառնում էր պատմություն»։

Հովհաննես Թումանյանի անժամանակ ու անարդարացիորեն վաղահաս մահվան հետ կապված ամենազգայուն գնահատումների մեջ անգամ բանասիրության դոկտորը որոնում- գտնում է հանրագումարի չտրոհվող այն միջուկը, որն այսօր էլ, հարյուրամյա հեռավորությունից Թումանյանի եւ նրա ստեղծագործության բնութագրումներում միանգամայն ճշգրիտ է եւ ակնածանք է հարուցում ստույգ գիտականությամբ։ Ո՞վ էր Թումանյանը՝ հարցնում է հայտնի պատմաբան Ա. Հովհաննիսյանը իր «Հովհաննես Թումանյան» հոդվածում եւ պատասխանում՝ նա «հայ բանաստեղծական կուլտուրայի գագաթն» էր, որի խոսքը կլանում էր աճող սերնդին, իսկ ծերերի ականջին հնչում «որպես ժողովրդական դարավոր իմաստություն». «Անմահանալու համար նա չէր սպասում մահվան»։ Բացարձակ սիրո ու պաշտամունքի վերադիրներով է բանաստեղծին դեպի հավերժություն ճանապարհում Սիմեոն Հակոբյանը։ «Հովհաննես Թումանյան» գրական դիմանկարը տպագրվում է իր խմբագրած «Արեգ» ամսագրում։ Հակոբյանը նրան համարում է այդ սերնդի փայլուն ներկայացուցիչը, որ «բանաստեղծությունը մոտեցրեց կյանքին եւ ժողովրդին։ Եւ այսպիսով մեր գրականության պատմության մեջ նոր դարագլուխ առաջացրեց։ «...Մի ամբողջ աշխարհայացք էր տապալվում Հովհաննես Թումանյանի բանաստեղծության մեջ,— գրում է նա,— մի հոռի աշխարհայացք, որի համաձայն բանաստեղծականը, ազնիվը միայն ուռուցիկ, փայլուն իրերի մեջ էր։ Հովհաննես Թումանյանը այս տեսակետից ռեալական բանաստեղծության ներկայացուցիչը եղավ եւ ցույց տվեց, որ կյանքի պարզության ու խորության մեջ է թաքնված ճշմարիտ բանաստեղծությունը»[18] [413]։

Թումանյանի մահվան ցավագին զգացողությամբ է գրված Հ. Օշականի «Հովհ. Թումանյան. Նիշեր» հոդվածը։ Մեծ գրադատը, որն անշուշտ ժամանակին անդրադարձել էր Թումանյանի գրվածքներին՝ առաջին հայացքից բավական սուր, կոշտ բնորոշումներով, պարզապես գրում է, թե «իր մահովը կանհետանա հայ գրականության ամենեն ազնվական համեստ ու արժանավոր մշակներեն մեկը»[19]։

---

[18] «Արեգ», հմ. 4, Բեռլին, 1923, էջ223։

[19] «Ճակատամարտ», հմ. 3179 (ապրիլի 15), Կ. Պոլիս, 1923։

Բանաստեղծի մարդկային բացառիկ առաքինությունների նուրբ բնութագրումներով, մեծ կորստի անփոխարինելիության ցավոտ գիտակցությամբ է շնչում Գրիգոլ Ռոբաքիձեի «Լուսեղեն Հովհաննեսը» հոդվածը։ «Շա՜տ մեծ է մեր վիշտը,— գրում է նա,— որովհետեւ Հովհաննեսը բանաստեղծ էր. Հովհաննեսը Մարդ էր, Հովհաննեսը բարեկամ էր։ Եւ ամեն ինչում կատարելապես լուսեղեն։ Ջուր չեն նրան Ջորրորդ Ավետարանչի անունով կնքել։ Նման անհատ հարյուր տարին մեկ է շողարձակում, եւ Հովհաննեսը նախեւառաջ անհատ էր։ Դեռ իր արտաքինը՝ բարձրահասակ, փոքրասիական պրոֆիլ, ինչպես մեդալիոն վեհապանծ ռասայի՝ միշտ լուսեղեն ժպիտով։ Միշտ «ճերմակ», *իսկապես կենսաբանական ապացույցը պոետի։ Հոգին՝ ամենատես, նուրբ, բարի, ամենաբարձրյալի պես միշտ խանդավառ։ Սիրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անապական։ Վերջապես՝* իսկական զավակ Հայաստանի... *Հովհաննեսը սիրո մարմնացում էր։ Նրա մոտենալը որեւէ առարկայի կամ թե երեւույթի՝ միշտ էլ անց էր կենում սիրո պրիզմայի միջով»*[20] *[422]։*

Գնահատումի ու հրաժեշտի այսօրինակ խոսքերը շատ են գրքում, բայց դրանցով պատմությունը չի ավարտվում. պատմությունը նոր է սկսվում՝ հավերժությանը ձուլելու տիեզերական մի շքեղ գոյություն, երիցս օրինակելի ու իմաստավոր մի անօրինակ կյանքի պատմություն... «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան։ Շատերը ինձ երջանիկ են կարծում, կյանքս հարթ ու հավասար, բայց ներքին փոթորկումներիս ու աղմուկներին շատ են անծանոթ. ոչ ոք ոչինչ չգիտե։ Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել... եւ ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու երբեք ... «բոլորը բարեխղճորեն աշխատեցին ինձ գտնել, բայց ավելի կորցրին...»[21]*,— 1923 թ. հունվարի 24-ին Նվարդի հետ զրուցելիս մարգարեաբար ասել էր Թումանյանը։*

Թումանյանը՝ հայոց բանաստեղծության ու ազգային ոգու հանճարեղ կրողը, չափազանց մեծ ու խորամիտ էր նաեւ իր տվածի մեծությունը գիտակցելու առումով։ Նա գիտեր, համոզված էր, որ ամեն գիտակից հայ

---

[20] *Վրացերեն առաջին անգամ տպագրվել է՝ «Ռուբիկոն», 8 ապրիլի, Թիֆլիս, 1923։ «Մարտակոչի» ապրիլի 15-ի ներդիր թերթում կա հաղորդագրություն. «Վրաց գրողների օրգան «Ռուբիկոն»-ի վերջին համարը (ապրիլի 8) ամբողջովին նվիրված է Թումանյանի անվանը եւ հիշատակին։*

[21] Ն. Թումանյան, *Հուշեր եւ զրույցներ, 1969, էջ 307։*

ունենալու է ի՛ր Թումանյանը, ամեն սերունդ փորձելու է ընթերցել իր Թումանյանը։ Վկայությունը երիտասարդ գրականագետ Եւա Մնացականյանի այս հրաշալի ստեղծումն է՝ «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» հիմնարար աշխատությունը, որը, իրավամբ, ծանրակշիռ ու գիտական նոր խոսք է թումանյանագիտության բնագավառում։

Ամբողջ գիրքը դրվագ առ դրվագ ներկայացնելու գայթակղությանը տուրք չտալով՝ հավելենք միայն, որ այն գրված է բացարձակ գրագետ հայերեն, շահեկանորեն առանձնանում է համապատասխան կարգահասկացութային բառապաշարով ու ծանոթագրությունների համապարփակ, խիստ տարողունակ էջերով։

Գրքի գնահատությունը եւ բանասիրության դոկտոր, երիտասարդ թումանյանագետ Եւա Մնացականյանի մասնագիտական պատրաստվածությունն ու աշխատելաոճը նոր սպասում են ձեւավորում՝ շուտով ընթերցողի սեղանին տեսնելու «Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությամբ» անթոլոգիայի երկրորդ հատորը եւ ակնկալելու 1923-ից հետո ստեղծված թումանյանագիտությանը, որն, անշուշտ, սպասում է իր մեկնաբանին...

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հովհ. Թումանյան, Եւա Մնացականյան, թումանյանագիտություն, գրաքննադատական արձագանքներ, գրական դպրոցներ եւ ուղղություններ, գիտական ու համակարգային վերլուծություն։

РЕЗЮМЕ

В конце 2024 года по решению ученого совета Института литературы имени Манука Абегяна НАН РА вышло в свет масштабное исследование доктора филологических наук Евы Мнацаканян «Произведения Ованеса Туманяна в оценке литературно-критической мысли своего времени».

За последние 130 лет критическая мысль проявила исключительный интерес к личности всеармянского поэта, его творческим поискам, отдельным произведениям, а также к его национально-общественной и культурной деятельности. Автор исследования предпринял целостное исследование публикуемых в течение более трех десятилетий критических отзывов на творчество Туманяна. Собранный разнородный и объемный материал: газетные передовицы, статьи, рецензии, крупные и небольшие монографические исследования Мнацаканян подвергла научному и системному анализу.

Статья посвящена рассмотрению проблем, выдвинутых в исследовании Евы Мнацаканян, а также связанных с Туманяном и его литературной эпохой многочисленных вопросов, оставшихся нерешенными и заслуживающих изучения.

SUMMARY

At the end of 2024, following a decision by the Academic Council of the Institute of Literature after M. Abeghyan of the National Academy of Sciences of Armenia, a large-scale study by Eva Mnatsakanyan, Doctor of Philology, entitled “The Works of Hovhannes Tumanyan in the Assessment of Literary and Critical Thought of His Time” was published.

Over the past 130 years, the critical thought has shown exceptional interest in the personality of the pan-Armenian poet, his creative pursuits, individual works, as well as his national, social, and cultural activities. The author of the study undertook a comprehensive study of critical reviews of Tumanyan’s works published over more than three decades. Mnatsakanyan conducted a scientific and systematic analysis of the diverse and voluminous material she had collected, namely: newspaper editorials, articles, reviews, and large and small monographic studies.

The article is devoted to the consideration of the problems raised in Yeva Mnatsakanyan’s study, as well as numerous issues related to Tumanyan and his literary era that remain unresolved and deserve study.